# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.12.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ԱՄ-2018/188**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.11.2018թ. թիվ 27/26-3/1271803/-18 գրությամբ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 22.11.2018թ. թիվ 01/10-250 գրության հիման վրա, 28.11.2018թ. թիվ 27/26-3/1271803/-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի կողմից գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/188 ընթացակարգի շրջանակներում 03.12.2018թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.11.2018թ. թիվ 01/10-250 գրությամբ հայտնել է, որ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով և Կարգի 45-րդ կետով «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 15.11.2018թ. կազմված ծանուցմամբ միակողմանի լուծել է «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 25.09.2018թ. կնքված «ՈՒԱԿ-ԳՀԱՇՁԲ-18/54» ծածկագրով «Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման» պայմանագիրը, քանի որ Ընկերությունը էականորեն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/188 ընթացակարգի շրջանակներում 03.12.2018թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

**4. ՍՑ-ԱՄ-2018/188 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ՍՑ-ԱՄ-2018/188 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 25.09.2018թ. կնքվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՇՁԲ-18/54» ծածկագրով «Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների» կատարման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների» կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

3. Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

4. Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունները կմատուցվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում:

5. «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 28.09.2018թ. կնքվել է Համաձայնագիր թիվ 1-ը՝ «ՈՒԱԿ-ԳՀԱՇՁԲ-18/54» ծածկագրով 25.09.2018թ. կնքված պայմանագրի համաձայն, որի 1-ին կետով սահմանվել է, որ հետագա համագործակցության համար Կողմերը որոշեցին Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար նախատեսել ֆինանսական միջոցներ և Պայմանագրում կատարել փոփոխությունները և լրացումները՝

1.1 Պայմանագիրը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ թիվ 2 հավելվածով (վճարման ժամանակացույց), որը շարադրված է Համաձայնագիր թիվ 1 հավելվածում:

6. Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

***ա) Կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,***

***բ) Խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:***

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.11.2018թ. թիվ 27/26-3/1271803/-18 գրությունը, «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 22.11.2018թ. թիվ 01/10-250 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը*** կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 25.09.2018թ. կնքվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՇՁԲ-18/54» ծածկագրով «Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների» կատարման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների» կատարման

պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունները կմատուցվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում:

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 28.09.2018թ. կնքվել է Համաձայնագիր թիվ 1-ը՝ «ՈՒԱԿ-ԳՀԱՇՁԲ-18/54» ծածկագրով 25.09.2018թ. կնքված պայմանագրի համաձայն, որի 1-ին կետով սահմանվել է, որ հետագա համագործակցության համար Կողմերը որոշեցին Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար նախատեսել ֆինանսական միջոցներ և Պայմանագրում կատարել փոփոխությունները և լրացումները՝

Պայմանագիրը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ թիվ 2 հավելվածով (վճարման ժամանակացույց), որը շարադրված է Համաձայնագիր թիվ 1 հավելվածում:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

***ա) Կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,***

***բ) Խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:***

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն Ընկերությանն ուղղված 15.11.2018թ. թիվ 01/10-244 ծանուցմամբ՝ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 25.09.2018թ. կնքված «ՈՒԱԿ-ԳՀԱՇՁԲ-18/54» ծածկագրով «Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման

աշխատանքների» կատարման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին, հայտնել է, որ Ընկերությունը Պայմանագրի համաձայն՝ պարտավորվել է պայմանագրով ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից սկսված քսան օրացույցային օրվա ընթացքում կատարել և Կենտրոնին հանձնել Պայմանագրին կից թիվ 1 հավելվածով նախատեսված աշխատանքները: Պայմանագրով ֆինանսական միջոցները նախատեսվել են 2018 թվականի սեպտեմբերի 28-ին, որի մասին Կենտրոնի և Ընկերության միջև 28.09.2018թ. կնքվել է թիվ 1 համաձայնագիրը:

Վերոգրյալով պայմանավորված, Ընկերությունը Պայմանագրով ստանձնած Աշխատանքների կատարման պարտականությունը պետք է կատարեր և Կենտրոնին հանձներ 2018 թվականի սեպտեմբերի 28-ից սկսած քսան օրացույցային օրվա ընթացքում, այսինքն՝ 2018 թվականի հոկտեմբերի 18-ը ներառյալ: Սակայն մինչ օրս Ընկերությունը Աշխատանքները չի կատարել և չի հանձնել Կենտրոնին, ուստի հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 ենթակետը՝ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է Պայմանագիրը, որը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու պահից:

Այսպես, Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

***ա) Կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,***

***բ) Խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Այսպիսով, վերը նշված փաստերով պայմանավորված, գտնում եմ, որ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի կողմից խախտվել են Ընկերության և «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 25.09.2018թ. կնքված «ՈՒԱԿ-

ԳՀԱՇՁԲ-18/54» ծածկագրով գնման պայմանագրով ստանձնած պարտավորությունները, քանի որ Ընկերությունը Պայմանագրի թիվ 1 հավելվածով նշված ժամկետում՝ այն է ծառայությունները կմատուցվեն դրանց համար հյամապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում, չի կատարել և չի հանձնել Պայմանագրով նախատեսված աշխատանքները Պատվիրատուին, որի հետևանքով Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվել է Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.11.2018թ. թիվ 27/26-3/1271803/-18 գրությամբ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00883436) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**